

2011 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 11.30-ին կայացած՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

**Քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ
Ա. Ալեքսանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ա. Գրիգորյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար
Կ. Վարդանյան	«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի գործադիր տնօրեն
Գ. Կարապետյան	«Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Ֆարամազյան	«Ջի Էն Սի-Ալֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ռ. Վարդանյան	«Քվանտ» վարժարանի տնօրեն
Բ. Ենգիբարյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
Հրավիրվածներ՝	
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Օսիկյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

Վ. Դանիելյան	ՀՀ էկոնամիկայի նախարարի խորհրդական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Մ. Փաշայան	ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ՏՏ վարչության պետ
Կ. Բեգլարյան	ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության պետ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
Ս. Արաբաջյան	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ
Ա. Քուչուկյան	«Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
Հ. Խանջյան	«Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Ավոյան	«Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն
Հ. Չոբանյան	«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Ս. Մկրտչյան	Վիկիպեդիայի զարգացման կոորդինատոր
Վ. Պողոսյան	«Ինստիգեիտ» ՍՊԸ-ի հիմնադիր
Է. Մանուկյան	«ԻՄՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
Մ. Փափազյան	«ԷյՓիՋի Արմ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Սարգսյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի ՏՏ ՋԱԽ քարտուղարության առաջատար մասնագետ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Վ. Դանելյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

- 1) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝

ա. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանի առաջարկությանը համապատասխան, քննարկման առարկա դարձնել համակարգչային սարքավորումների ներմուծման ժամանակ կիրառվող հարկային ռեժիմի (ԱԱՀ-ից ազատելու) վերանայման նպատակահարմարության հարցը,

բ. ՀՀ-ում գործող ՏՏ ընկերությունների կողմից արտերկրում վերապատրաստում անցնող ՏՏ ոլորտի կադրերի թվաքանակի և նրանց վրա կատարվող ծախսերի չափի մասին տեղեկատվության հիման վրա գնահատել պետության կողմից հարկվող գումարի չափը և արտոնությունների կիրառման ռիսկայնության մակարդակը.

2) առաջարկել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել արտերկրում վերապատրաստում անցնող ՏՏ ոլորտի կադրերի թվաքանակի և նրանց վրա կատարվող ծախսերի չափի մասին տեղեկատվություն.

3) առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին էլեկտրոնային վիզայի հետ կապված առաջարկները գրավոր ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ.

4) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ էլեկտրոնային առևտրի հետ կապված հարցերի քննարկումների ավարտից հետո ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել առաջարկություններ բոլոր այն վիճահարույց խնդիրների վերաբերյալ, որոնց շուրջ ձեռք չի բերվել համաձայնություն.

5) ընդունել ի գիտություն «Երևանի մաթեմատիկական մեթենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանի հաղորդումը՝ «Ուսում» ծրագրի ներդրման գծով համապատասխան ասոցիացիայի ստեղծման հանձնարարականի կատարման ու հետագա գործունեության մասին:

2. ՀՀ մաքսային սահմանով անցնող որոշ ապրանքատեսակների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի վերաբերյալ առաջարկություն

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց` ընդունել ի գիտություն ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի հաղորդումն այն մասին, որ արդեն իսկ վերանայվել և հավասարեցվել են ՀՀ մաքսային սահմանով ներմուծվող` SՏՏ ոլորտի ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերը:

3. Միասնական էլեկտրոնային համակարգերի ինտեգրման անհրաժեշտության մասին

(Կ. Վարդանյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց` հանձնարարել ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին երկշաբաթյա ժամկետում շահագրգիռ կողմերի հետ քննարկել Միասնական էլեկտրոնային համակարգերի ինտեգրացման հետ կապված խնդիրները և ներկայացնել առաջարկություններ:

4. ՀՀ կառավարության որոշման նախագիծ գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների դասակարգման մասին

(Բ. Ենգիբարյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց` հանձնարարել ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին 10-օրյա ժամկետում, արագացված գործընթացով, Մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի քննարկմանը ներկայացնել համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

5. Վիկի նախագծերի զարգացումը Հայաստանում

(Կ. Վարդանյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց` հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին, համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի և ՀՀ-ում Վիքիի զարգացման կոորդինատոր Սուսաննա Մկրտչյանի հետ, բացահայտել Հայաստանում Վիքիմեդիա նախագծերի զարգացման բոլոր խոչընդոտները և հաջորդ ՏՏ ԶԱԽ-ի նիստում ներկայացնել առաջարկություններ:

6. Հաղորդագրություն էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների գծով փորձագիտական առաքելության արդյունքների վերաբերյալ

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

1) ձևավորել աշխատանքային խումբ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և շահագրգիռ պետական այլ մարմինների համապատասխան մասնագետների մասնակցությամբ.

2) աշխատանքային խմբում քննարկել միջազգային փորձագետի ներկայացրած առաջարկները և մեկամսյա ժամկետում ներկայացնել համապատասխան նորմատիվ ակտերի նախագծեր:

7. այլ հարցեր

1) Ընդունելի գիտություն՝

ա. «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ Հ. Խանջյանի տեղեկատվությունը՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի «Տեղեկատվություն բոլորի համար շրջանակներում» Մոսկվայում կայացած համաժողովի Տեղեկատվական հասարակությունում թվային ժառանգության պահպանման թեմայով,

բ «Քվանտ» վարժարանի տնօրեն Ռ. Վարդանյանի տեղեկատվությունը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, «Քվանտ» վարժարանի կողմից կանադական «Լոգո» ուսումնական ծրագրի 5 հանրակրթական դպրոցներում տեղայնացման մասին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական Վ. Դանիելյանին՝

ա. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության և «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ Հ. Խանջյանի հետ համատեղ մշակել Տեղեկատվական հասարակությունում թվային ժառանգության պահպանման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

բ. պարզաբանել 2012 թվականի ընթացքում կազմակերպվելիք «Ռիջիթեք բիզնես ֆորում»-ի ֆինանսավորման աղբյուրը և դրա մասին զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ